«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07»

ք. Երևան 20 Հոկտեմբեր 2026թ.

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Լուիզա Սարգսյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԸԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՄ-ն,** (այսուհետ՝ Կատարող), ի դեմս մասնաճյուղի տնօրեն՝ Աննա Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն) համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Իրականացնել նախագծի ընդհանուր վերահսկողություն:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կատարել Ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը, ներառյալ գրասենյակային տարածքի, SS և գրասենյակային սարքավորումների, կապի և տրանսպորտի միջոցների, ինչպես նաև ուսուցման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ սակայն չսահմանափակվելով՝ ուսուցման դահլիճների վարձակալության, համաժամանակյա թարգմանության, սուրճի ընդմիջումների, ձեռնարկների տպագրության և այլ նմանատիպ ծախսերը:

2.4.5 Պայմանագրի ավարտին Պատվիրատուին փոխանցել.

ա) Բոլոր մշակված ծրագրերի ամբողջական և թարմացված սկզբնական կոդերը՝ ներառյալ կառուցման (build) սկրիպտերը և կարգաբերման ֆայլերը:

բ) Բոլոր տեխնիկական և ոչ տեխնիկական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համակարգի սպասարկման, կատարելագործման կամ հետագա զարգացման համար:

գ) Աշխատանքի օգտագործման, վերարտադրման, հարմարեցման, թարգմանության, տարածման, հրապարակման և ածանցյալ աշխատանքների ստեղծման բոլոր իրավունքները:

2.4.6 Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չօգտագործել, չպատճենել և/կամ չվերարտադրել Ծառայությունների մատուցման ընթացքում ստեղծված նյութերի որևէ մասը՝ սույն Պայմանագրի շրջանակներից դուրս որևէ նպատակի համար:

2.4.7 Երաշխավորել, որ Ծառայությունների մատուցման շրջանակներում, տրամադրված ծրագրային ապահովումն ու հավելյալ ծառայությունները, չեն ունենա նախագծման, նյութերի կամ իրականացման թերություններ, որոնք կարող են հանգեցնել ընդհանուր համակարգի կամ դրա առանձին բաղադրիչների՝ սույն Պայմանագրով սահմանված տեխնիկական առաջադրանքի պահանջների անհամապատասխանություն:

2.4.8 Երաշխավորել, որ Ծառայությունների մատուցման ընթացքում չեն խախտվում որևէ երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքները:

2.4.9 Ձեռք բերել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ երրորդ կողմի բոլոր իրավունքները, լիցենզիաները և թույլտվությունները:

2.4.10 Փոխհատուցել և պաշտպանել Պատվիրատուին ցանկացած պահանջների, վնասների կամ դատական գործընթացների դեպքում, որոնք բխում են Ծառայությունների մատուցման հետ կապված երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքների ենթադրյալ խախտումից: Կատարողը պարտավոր է իր հաշվին պաշտպանել կամ կարգավորել նման պահանջները և կրել դրանց լուծման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ՝ փոխհատուցումները, իրավական ծախսերի վճարումը, ինչպես նաև Ծառայությունների փոփոխությունը՝ խախտումը վերացնելու նպատակով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 60.207.600 (վաթսուն միլիոն երկու հարյուր յոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ընդ որում, վճարումները յուրաքանչյուր չափաբաժնի համար իրականացվում են առանձին՝ համապատասխան չափաբաժնի ամբողջությամբ կատարման և Պատվիրատուի կողմից այն 30 (երեսուն) օրվա ընթացքում ընդունման ու հաստատման արդյունքում: Այն դեպքում, երբ կատարված աշխատանքի ստուգման, ուսումնասիրության կամ ընդունման գործընթացի համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ, և Պատվիրատուն օբյեկտիվորեն չի կարող իրականացնել հաստատումը նշված ժամկետում, վերջինս պարտավոր է մինչև սահմանված 30 (երեսուն) օրյա ժամկետի ավարտը գրավոր կամ բանավոր ծանուցմամբ տեղեկացնել Կատարողին՝ նշելով հետաձգման պատճառները, ինչպես նաև աշխատանքի ընդունման և հաստատման վերջնական ժամկետը: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Հավելված N 1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Սույն Պայմանագրի շրջանակներում մատուցված Ծառայությունների արդյունքի նկատմամբ բոլոր բացառիկ սեփականության իրավունքները, ներառյալ հեղինակային իրավունքները, պատկանելիությունը և այլ մտավոր սեփականության իրավունքները՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի ծավալով, ինչպես նաև բոլոր հարակից փաստաթղթերը, տվյալների բազաները, ուսուցողական նյութերը, API-ները և սույն Պայմանագրի շրջանակներում ստեղծված ցանկացած այլ նյութ, պետք է փոխանցվեն Պատվիրատուին՝ Ծառայությունների վերջնական ընդունմամբ՝ առանց հավելյալ վարձատրության:

7.3 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.5 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.6 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Կատարողներից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Կատարողների՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Կատարողների՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում

գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.12 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ	**«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹՐՆԵՇՆԼԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15	Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4շ.
ՀՎՀՀ՝ 00171676	Փաստացի գործունեության հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկը՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011062248	ՀՀ՝ 2470094672070000
Գլխավոր քարտուղար՝ Լ.Սարգսյան	ՀՎՀՀ՝ 01534707
	Տնօրեն Ա. Ստեփանյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 Տեպտեմբեր 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
Չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Տեխնիկական բնութագիրը**	**Չափման միավորը**	**Ընդհանուր գինը/ՀՀ դրամ**	**Ընդհանուր քանակը**	**Մատուցման ժամկետը**
1	72261110/1	Բարեվարքության հարցաթերթիկների թվայնացում	դրամ	13.746.000,00	1.00	Պայմանագրի կնքման պահից մինչև 25.12.2026թ.
2	72261110/2	Հայտարարագրերի հրապարակային ռեեստրի կառուցվածքի փոփոխություն	դրամ	12.685.200,00	1.00	
3	72261110/3	2011-2021թթ հայտարարագրերի միգրացիա	դրամ	33.776.400,00	1.00	

*Տեխնիկական բնութագիրը սահմանված է Հայտարարագրման էլեկտրոնային հարթակի զարգացման տեխնիկական առաջադրանքում, որը կցվում է սույն Պայմանագրին

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15
ՀՎՀՀ՝ 00171676
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011062248
Գլխավոր քարտուղար՝ Լ. Սարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹԸՐՆԵՇՆԸԼ ՍԻՍԹԸՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/42.
Փաստացի գործունեության հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4
Բանկը՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ՝ 2470094672070000
ՀՎՀՀ՝ 01534707
Տնօրեն Ա. Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
20 մայիսի 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261110/1	Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000	13.746.000
2	72261110/2	Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200	12.685.200
3	72261110/3	Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ						33.776.400	33.776.400	33.776.400	33.776.400

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15
ՀՎՀՀ՝ 00171676
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011062248
Գլխավոր քարտուղար՝ Լ. Սարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹՐՆԵԾՆԼԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱԱ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Արմենակյան փ. 2/4
Փաստացի գործունեության հասցե՝ ք. Երևան, Արմենակյան փ. 2/4
Բանկը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ՝ 24700946072070000
ՀՎՀՀ՝ 01534707
Տնօրեն Լ. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«—» 20 թ.

Հայտարարագրման էլեկտրոնային հարթակի զարգացման

Տեխնիկական առաջադրանք

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Բովանդակություն

Ծրագրի նկարագրություն 3

2011-2021 թվականների հայտարարագրերի միգրացիա նոր հարթակ 4

Հրապարակային ռեեստրի կառուցվածքի փոփոխություն և ընտանեկան կապերի արտացոլում 5

Բարեվարքության հարցաթերթիկների ինտեգրում հարթակում 6

Ընդհանուր պահանջներ 6

Հաշվետվություններ և վիճակագրություն 7

Ծրագրային ապահովման բնութագրեր 8

Անվտանգություն 8

Սպասարկում 9

Ծրագրի նկարագրություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարագրերի էլեկտրոնային գործող հարթակը (այսուհետ՝ Հարթակ) գործարկվել է և հայտարարատուներին հասանելի է 2023 թվականի հունվարից: Հարթակի միջոցով հավաքագրվել են 2021 թվականի և հաջորդող տարիների տարեկան, ինչպես նաև 2021 թվականի հունիսից սկսած՝ պաշտոնեական պարտականությունների ստանձնման և դադարեցնելու՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերը:

2025 թվականի հունվարի 1-ից նույն Հարթակում ապահովվել է քաղաքական կուսակցությունների տարեկան հաշվետվությունների լրացման և ներկայացման հնարավորությունը, իսկ 2025 թվականի հունիսի 1-ից գործարկվել է այդ հաշվետվությունների հրապարակային ռեեստրը:

Պետք է նշել, որ հայտարարագրման Հարթակով ներկայացվում են նաև կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների հայտարարագրերը, և դրանց համար ապահովված է միևնույն ֆունկցիոնալությունը:

Հայտարարագրման Հարթակով հայտարարագրերի հավաքագրումը ներառում է փոխգործելիություն պետական այլ էլեկտրոնային համակարգերի, ինչպես նաև նույն անձանց նախորդիվ հանձնված հայտարարագրերի հետ: Հարթակը ներկայումս փոխգործելի է Ճանապարհային ոստիկանության, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, Պետական եկամուտների կոմիտեի, Բնակչության պետական ռեգիստրի, Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգերի հետ: Չնայած նրան, որ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգի և հայտարարագրման Հարթակի միջև տվյալների փոխանցումն ապահովված է, այնուամենայնիվ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգի տվյալների և հայտարարագրի ձևանմուշի կառուցվածքային տարբերությունների պատճառով վերջինիս ինտեգրումը հայտարարագրման Հարթակի հետ դեռևս ամբողջովին իրականացված չէ:

Հարթակի միջոցով հնարավոր է ներկայացնել հարցումներ, ինչպես նաև արդեն իսկ հրապարակված հայտարարագրերում ուղղումներ կատարելու հայտեր:

Հարթակը հագեցած է հաշվետվությունների դուրսբերման, ինչպես նաև վիճակագրության վիզուալիզացիայի հնարավորություններով: Համակարգի ադմինիստրատորների կողմից հնարավոր է պարբերական ծանուցումների ուղարկումը, կցված ուղեցույցերի խմբագրումը, հայտարարագրերի դաշտերի հուշումների խմբագրումը, ինչպես նաև օգտատերերի դերերի վերանայումը:

Հարթակի զարգացման ռազմավարությունը ներառում է հետևյալ ուղղությունները.

- 2011-2021 թվականների հայտարարագրերի միգրացիա նոր Հարթակ,
- Հրապարակային ռեեստրի կառուցվածքի փոփոխություն և ընտանեկան կապերի արտացոլում,
- Բարեվարքության հարցաթերթիկների ինտեգրում Հարթակում:

2011-2021 թվականների հայտարարագրերի միգրացիա նոր հարթակ

Հայտարարագրման նախորդ համակարգից նոր Հարթակ են տեղափոխվել և ամբողջական ֆունկցիոնալությամբ այժմ հասանելի են պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված 2021 թվականի տարեկան հայտարարագրերը, ինչպես նաև 2021 թվականի հունիսից հետո՝ պաշտոնեական պարտականությունների ստանձնման և դադարեցման հայտարարագրերը: Այս ժամանակահատվածից ավելի վաղ ներկայացված հայտարարագրերի տեղափոխումը նոր համակարգ առկախված է այն պատճառով, որ դրանք այլ ձևաթղթերով հանձնված հայտարարագրեր են (2011-2020 թվականը ներառյալ): 2011-2020 թվականների, այդ թվում նաև մինչև 2021 թվականի հունիս ընկած ժամանակահատվածի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերը ներկայացված են Հայտարարագրման հին համակարգում (https://old.file-online.cpcarmenia.am/): Կուսակցությունների ղեկավար կազմի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերը տեղակայված են նույնպես հայտարարագրման հին հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://file-online-old.pp.cpcarmenia.am: Կուսակցությունների ղեկավար կազմի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերից անհրաժեշտ է տեղափոխել գործող համակարգ 2021 թվականից սկսված տարեկան և 2022 թվականից նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերը:Վերջիններիս տեղափոխման պարագայում Համակարգը հնարավորություն կընձեռի դրանցում փոփոխություններ կատարել, ինչպես այս պահին իրականացվում են 2021-ից սկսած հայտարարագրերի պարագայում:

Ավելին, նախորդ համակարգն այլևս չի սպասարկվում, ինչպես նաև այդ համակարգում անձանց կատարած գործողությունների հետագծելիությունը զգալիորեն զիջում է գործող Հարթակի կարողություններին, հետևաբար հայտարարագրերի միգրացիան և նախորդ համակարգից ամբողջական հրաժարումը արդարացված է թե՛ թափանցիկության ապահովման, թե՛ օգտատերերի ավելի լավ փորձառության, թե՛ հատկապես տվյալների պաշտպանության տեսանկյունից:

Հայտարարագրերի նոր ռեեստրը նաև համապատասխանեցված է Բաց կառավարման գործընկերության շրջանակներում ՀՀ ստանձնած հանձնառության պահանջներին և ապահովում հայտարարագրերի որոնման խելացի համակարգ, ինչպես նաև բաց տվյալների հասանելիություն (OpenAPI), մինչդեռ նախորդ համակարգում նման գործիքներ ներդրված չեն, հետևաբար բոլոր հայտարարագրերի միգրացիան նոր համակարգ կապահովի դրանց նկատմամբ թափանցիկության և հասանելիության նույն ստանդարտների կիրառման հնարավորություններ:

Հրապարակային ռեեստրի կառուցվածքի փոփոխություն և ընտանեկան կապերի արտացոլում

Գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերը հրապարակվում եմ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի Ռեեստրեր պորտալում: Հրապարակված հայտարարագրերի որոնումը հնարավոր է տարբեր չափանիշներով, ինչպես նաև բանալի բառերով:



Հայտարարագրերի հրապարակային ռեեստրի պորտալը հնարավորություն է տալիս տվյալների ամբողջական ներբեռնման և հրապարակային շտեմարանին բաց հասանելիության համար: Համապատասխան ուղեցույցը հասանելի է Հանձնաժողովի կայքում:

Այնուամենայնիվ, հայտարարատու անձանց ընտանեկան կապերը հնարավոր է բացահայտել բացառապես պաշտոնատար անձանց հայտարարագրերի միջոցով, իսկ ռեեստրը ինքնին այդ կապերը չի ցուցադրում: Հայտարարագրերը հրապարակային պորտալում ներկայացված են առանձին՝ առանց տարիների և ընտանիքի անդամների կապի ցուցադրման, ինչը զգալիորեն խոչընդոտում է հանրային վերահսկողության հնարավորությունները:

Բարեվարքության հարցաթերթիկների ինտեգրում հարթակում

Բարեվարքության հարցաթերթիկների հավաքագրման թվայնացումը կարևորագույն նշանակություն ունի համակարգի ամբողջականության տեսանկյունից, մասնավորապես, այն կբացառի անկատար համակարգերի պատճառով թեկնածուների կողմից թույլ տրվող սխալները: Հարցաթերթիկները պետք է միացված լինեն փոխգործելիության հարթակին և պետք է հնարավոր լինի վերաբերելի տվյալները ներբեռնել համապատասխան պետական էլեկտրոնային շտեմարաններից:

Ավելին, պաշտոնում նշանակվող անձանց համար պետք է նախատեսվի հնարավորություն հարցաթերթիկում ներկայացված տվյալները ավտոմատ կերպով ներբեռնել պաշտոնատար անձի պաշտոնի ստանձնման գործող հայտարարագրում, իսկ առաջխաղացման ենթակա և արդեն իսկ հայտարարատու հանդիսացող անձանց դեպքում, պետք է նախատեսվի նաև պաշտոնատար անձի հայտարարագրում ներկայացված տվյալների ավտոմատ կերպով ներբեռնվելու հնարավորություն հարցաթերթիկի համապատասխան բաժիններում ապահովելով ներկայացվող տվյալների համահունչ լինելը և կանխել տարբերվող տվյալների ներկայացումը միևնույն ժամանակահատվածի համար:

Բարեվարքության մոդուլի կառուցման աշխատանքները սկսվել են 2024 թվականի առաջին եռամսյակում, սակայն տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում կարիք է առաջացել փոփոխել դրա ամբողջ տրամաբանությունը, ինչպես նաև ինտեգրել ոչ թե մեկ, այլ երկու հարցաթերթիկ՝ բարեվարքության ուսումնասիրության հարցաթերթիկ և բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկ.(հարցաթերթիկներում առկա են բովանդակային տարբերություններ): Նշված հարցաթերթիկները անհրաժեշտ է Համակարգում ինտեգրել «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ի N 04-Ն որոշման հիման վրա:

Ընդհանուր պահանջներ

Նշված երեք փոփոխությունները ինտեգրվելու են Հայտարարագրման էլեկտրոնային Հարթակին՝ հանդիսանալով վերջինիս անբաժանելի մասը, որի շրջանակներում երեք փոփոխությունների վրա է տարածվելու բոլոր

կարգաբերումները ինչ գործում է հարթակում և պարտադիր հետևելու է Հարթակի միևնույն տեխնիկական պահանջներին: Այս մոտեցումը խթանում է կոդավորման ստանդարտացված կիրառման պրակտիկան, նվազեցնում սխալների հավանականությունը և բարձրացնում համակարգի կայունությունը: Բացի այդ, ընդհանուր տեխնիկական պահանջների կիրառումը նպաստում է մոդուլային ճարտարապետությանը, ապահովելով մասշտաբայնություն և ապագա բարելավումների կամ նոր գործառույթների ավելացման հնարավորությունը:

Տեխնիկական պահանջները պետք է լինեն նույնը, ինչ սահմանված են հայտարարագրման Հարթակի համար, ներառյալ ինտուիտիվ դիզայնի և կիրառելիության ապահովում, անվտանգության սկզբունքով նախագծում, սպասարկելիություն, մոդուլայնություն և կրկնակի կիրառելիություն, փոխգործելիություն, արդյունավետություն, կոդի որակ, CI/CD գործընթացների իրականացում, թեստավորում և ապագա փոփոխություններին հարմարվողականություն (future-proofing): Բացի այդ, աշխատանքները պետք է իրականացվեն այն տրամաբանությամբ, որնվերների ռեեստրի մոդուլը ևս տեղակայվի Հարթակում:

Հաշվետվություններ և վիճակագրություն

Հարթակը պետք է կարողանա ստեղծել հաշվետվություններ և վիճակագրական տվյալներ: Վիճակագրական տվյալները պետք է լինեն հանրային և հասանելի հետաքրքրված անձանց՝ Հանձնաժողովի վեբկայքի միջոցով:

Հարթակը պետք է ապահովի հաշվետվությունների փաթեթ, որը հնարավոր կլինի ինքնուրույն կիրառել օգտվողների կողմից (նախապես սահմանված հաշվետվությունների որոշակի փաթեթով):

Հնարավոր դեպքերում, տեղեկատվությունը պետք է առանձնացվի ըստ պետական մարմնի, պաշտոնատար անձի տեսակի, տարածաշրջանի և այլ չափանիշների: Հաշվետվություններում ներառված տվյալները պետք է ներկայացվեն հասկանալի և տեսողական հարմար եղանակով:

Հաշվետվությունները պետք է հնարավոր լինի ներբեռնել տպելու համար հարմար ձևաչափով և/կամ մեքենայական ընթեռնելի ֆորմատով:

Ծրագրային ապահովման բնութագրեր

- **Համակարգային դիզայն (System Design).** Բոլոր նոր մոդուլների ու բարելավումների արտաքին տեսքերը պետք է լինեն միատեսակ և համապատասխանեն գործող Հարթակի արտաքին տեսքի (UI) լուծումներին՝ ունենալով օգտվողի համար հարմար և ըմբռնելի դիզայն:
- **Լեզուներ.** Հարթակի աշխատանքային լեզուն պետք է լինի հայերենը: Հնարավորության դեպքում նախատեսել նաև վիճակագրության և հաշվետվությունների արտահանում անգլերենով:
- **Ճկունություն.** Համակարգը պետք է նախագծված լինի այնպես, որ օրենքներում կամ գործառնական ընթացակարգերում հետագա փոփոխությունները հնարավոր լինի հեշտությամբ համապատասխանեցնել:
- **Մասշտաբայնություն.** Համակարգի ճարտարապետությունը պետք է նախագծվի ընդլայնման հնարավորությամբ՝ ապահովելու համար տվյալների ծավալի աճը, միաժամանակյա օգտատերերի թվի ավելացումը, ինչպես նաև հավելյալ ծառայությունների ինտեգրումը:

Անվտանգություն

Մատակարարը պարտավոր է ապահովել, որ համակարգի տվյալները պաշտպանված լինեն ոչ լիազորված մուտքից՝ բոլոր մակարդակներում: Բոլոր անվտանգության միջոցները պետք է իրականացվեն համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տեղեկատվական անվտանգության ժամանակակից լավագույն փորձի:

Սպասարկում

Նշված երեք փոփոխությունների տեխնիկական սպասարկումը կիրականացվի գործող Հարթակի տարեկան սպասարկման պայմանագրի և տրամաբանության շրջանակներում:

Երեք փոփոխությունների ավարտից հետո մատակարարը պարտավորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին փոխանցել ծրագրային ապահովման վերջնականացված կոդային բազան (Source Code)՝ համապատասխան փաստաթղթավորմամբ, ինչպես նաև դրա նկատմամբ հեղինակային իրավունքները: